

Գերեզմանատան մէջ, ուր բազմաթիւ տապանաքարեր, ցարդ անազարա մնացած ժամանակի աւերէն, կը պատմեն փառքը Բերիոյ հայ նշանաւոր գաղութին: Եթէ Հալէպի մէջ հայ մշակոյթին սատարող «գրադիր», արուեստագէտ, «երածիշտ» կաթողիկոսներ, Առաջնորդներ և «գրիչ» ու «քարտուղար» քահանաներ կը հանդիսանան Սալիպէ թաղի Ս. Քառասնից Մանկանց մատրան կամ անոր պատմական շրջադարձին մէջ, հո՛ւս, Աղիզիէի ընդարձակ Գերեզմանատան մէջ սակայն կը հանդիսանան իր սեփական հարուստ, պանդուխտ, «Արեւելցի» վաճառականները, որոնք ստար հանդիսացան Հալէպի առեւտուրին, մետաքսադորձութեան, տարազադորձութեան, և Արեւմուտքը իր բոլոր աեսակի առեւտուրով, ճանչցուցին Արեւելքի մեծ հաստատաններուն, Հալէպը հանդիսացնելով առեւտրական մեծ և իրական ժամադրավայր մը և զայն դարձնելով կամօրջ մը Եւրոպայի և Ասիոյ միջև, Ֆրանսայէն և Իտալիայէն սկսեալ մինչև Պարսկաստան և հետաւոր Հնդկաստան, մինչև Սուրբա: Քանի՛ քանի Հայեր, 1500 թուականներէն սաղին, Հայաստանէն, և մասնաւորաբար Զուզայէն եկան, առեւտրական մեծ ծրագիրներով Հալէպ հաստատուեցան և անոնց ոսկորները Հալէպի Հայոց աւանդն են այսօր, գեղեցիկ աւանդ մը սակայն: Երեսանի, Կարնոյ, Նոր Զուզայի, Սոչոյէնի, Ակնայ, Արաբկիրի, Սասնոյ և Կիւրիի հայ գաղութներու պատմութեան մէկ մասը հո՛ւս, Հալէպի մէջ պէտք է փնտոել, Աղիզիէի Գերեզմանատան մէջ ի մասնաւորի, ուր առանց ցանկապատի կամ ածուներու և երեցող բաժանումներու, անոնք հայրենակցաբար քովէ քով կը հանդիսանան, իւրաքանչիւր քաղաքացիներու միջև նշմարուած աղուոր խումբով մը, և ուր Հայաստան, Պարսկաստան և Փոքր Ասիա իրենց թաղամասերը ունին: Եւ ի՛նչ զմայլելի պատկեր, այդ ցուրտ, անդալար, անձառ, անհրապոյր շրջավայրին մէջ, անհունօրէն ախուր այդ հողվորաբնի մէջ, որպէսզի բոլոր այդ

պանդուխտները առանձին չմնան իրենց վերջին հանգստարանին մէջ, տասնեակ մը հայ պատուական հողեւորականներ, վարդապետ, քահանայ ու սարկաւազ, թաղուեր են հոն, պանդուխտներու կարգին, փոխանակ ամիսփուելու Ս. Քառասնից ներքը կամ դուրսը: Օր մը երբ լսեմ որ Հալէպի Հայոց այս Պալլըզլըն վերածուեր է նոր թաղերու և բնակութեան, հոգիս չափազանց պիտի արածի, վասնզի ան իսկական պատմութիւնն է Հալէպի երբեմնի ծագկեալ տոհմիկ կեանքին: Այս Գերեզմանատունը Հալէպի հայ անցեալ կեանքին մեծագոյն յիշատակարանն է և յաջորդութիւնը Ս. Քառասնից և Ս. Աստուածածին եկեղեցիներու պատմական յիշատակներուն, որոնց հովանիին տակ սկսաւ ու ծագկեցաւ նոյն այդ փայլուն կեանքը:

Հասարակաց այս ընդարձակ Գերեզմանատան առաջին մասը, որ մեծագոյնն է, կ'իյնայ թիւիշի հիւս. կողմը, որուն այժմու սահմաններն են՝ արեւելքէն՝ թիւիշէն Սիւլէյմանիյէ երկարող պողոտան և գերեզմանատան դուռը, արեւմուտքէն՝ Արտը Մէշնազայի գետինը որ Հայոց կը պատկանի. հիւսիսէն՝ թիւիշէն զէպի Աղիզիէ տանող և վերջէն բացուած ճամբան: Հարաւէն՝ մաս մը թիւիշ տանող ճամբան և տուներ:

Երկրորդ մասը եռանկիւն մ'է, միշտ որմախակ, որուն հիւս. և հարաւային սահմանները վերջէն բացուած և Աղիզիէ տանող ճամբաներն են, արեւելեան կողմը՝ եռանկեան վերջածայրը և ճամբայ. հարաւային կողմը՝ այս երկրորդ թաղամասի յատուկ դուռը և սակէ զատ Լատինաց մասին մէջ դա՛րձեալ դուռ. արեւելեան կողմը՝ պողոտայ, իսկ հիւս. արեւմտեան կողմը՝ տուներ:

Երրորդ մասին սահմաններն են՝ արեւելքէն՝ թիւիշէն Սիւլէյմանիյէ տանող հանրակառքի պողոտայ՝ Rue Millerand, և գերեզմանատան ա՛յս մասի երկու մեծ դուռները. մին՝ հիւս-արեւելեան կողմը, իսկ միւսը՝ հար-արեւելեան կողմը. արեւմուտքէն Հրէից հին գերեզմանատուն և տուներ: Հարաւէն՝